ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/181 «07» 05 2026թ.

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-Ի ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԱՃԱՌՔԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻՆ

Հ Ր Ա Վ Ե Ր

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **Էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ:**

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է ՀՀ ՆԳՆ բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ն** ունի.

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ

Ձեզ է ուղարկվում **ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-2** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը, պայմանագրին կից որակավորման և պայմանագրի ապահովումները կանխիկ փողի կամ բանկային երաշխիքների տեսքով՝

1. Որակավորման ապահովման չափը հավասար է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսին: Որակավորման ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված **«900008000698»** գանձապետական հաշվին: Բանկային երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է կից հավելված 3-ի համաձայն:
2. Պայմանագրի ապահովման չափը հավասար է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գնի 10 (տաս) տոկոսին: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված **«900008000664»** գանձապետական հաշվին: Բանկային երաշխիքի ձևով պայմանագրի ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է կից հավելված 4-ի համաձայն:
3. Իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայքէջի հղումը՝ ձևը կից հավելված 5-ի համաձայն:

Պարտականությունները կատարող **Խ. Իգիթյան**